

101401.00.6 Սպորտ

101401.02.6 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա Սպորտի բակալավր

Ընդհանրական վերջնարդյունքներ

1. Մասնագիտական գործունեություն պլանավորելու, իրականացնելու և գնահատելու գործընթացում, ինչպես նաև մասնագիտական ոլորտին առնչվող հետազոտություններում փորձարարական տվյալներ հավաքելու, մշակելու և մեկնաբանելու նպատակով տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաները կիրառելու կարողություն:
2. Թիմում աշխատելու, աշխատանքի կազմակերպման և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն:
3. Անձի զարգացման անատոմիական, ֆիզիոլոգիական, կենսամեխանիկական, հոգեբանական, մանկավարժական առանձնահատկությունների և օրինաչափությունների իմացություն:
4. Հիմնարար գիտելիքների իմացություն ճշգրիտ, բժշկակենսաբանական, հումանիտար, մարդաբանության գիտությունների մասին՝ ֆիզիկական կուլտուրայի կրթության և շարժողական գիտությունների ոլորտում կիրառելու նպատակով:
5. Ուսանողը ունի գիտելիք մարզամիջավայրի կառուցվածքի մասին, կարող է անցկացնել ֆիզիկական դաստիարակության, սպորտի, ակտիվ ժամանցի տարբեր միջոցառումներ՝ հաշվի առնելով պատմական, սոցիալական և իրավական առանձնահատկությունները:
6. Հիմնարար գիտելիքներ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ծագման, զարգացման և կառավարման մասին:
7. Ուսանողը կարող է ընթերցել, վերլուծել և մեկնաբանել գիտական գրականություն, և հիմնվելով դրա վրա՝ ձևակերպել հիմնավորված կարծիք:
8. Հիմնարար գիտելիքներ օտար լեզվով հաղորդակցվելու համար:

Մասնագիտական վերջնարդյունքներ

1. Մարդու շարժողական գործառույթների փոխակերպումների վերաբերյալ գիտելիքների իմացություն՝ հաշվի առնելով մարդու անհատական առանձնահատկությունները, ֆիզիկական գերլարվածությունը և գերբեռնվածությունը, ինչպես նաև հոգեհուզական վիճակը:
2. Ուսանողը հասկանում է հենաշարժողական համակարգի հետ կապված առողջական խնդիրների և վնասվածքների զարգացման ընդհանուր մեխանիզմը և դրսևորումները:
3. Ուսանողը գնահատում է մարդու ֆիզիկական ակտիվության դերը առողջության հետ կապված խնդիրների և վնասվածքների կանխարգելման գործում:
4. Ուսանողը ունի հիմնարար գիտելիքներ ֆիզիկական ռեաբիլիտացիայի տարբեր մեթոդների և դրանց ազդեցության մեխանիզմների մասին , կարող է ինքնուրույն և

արդյունավետ մշակել ռեաբիլիտացիոն միջոցառումների համալիր և կիրառել տարբեր օրգան համակարգերի հիվանդությունների դեպքում:

5. Ուսանողը կարող է կիրառել գիտական հետազոտական մեթոդներ՝ օգտագործելով ժամանակակից սարքավորումներ, մասնակցել ֆիզիկական կուլտուրայի և կինեզիոթերապիայի ոլորտում գիտական հետազոտություններին և ներկայացնել դրանց արդյունքները :
6. Ուսանողը կարող է ճշգրիտ իրականացնել հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ վիճակի հետազոտում և անել եզրակացություն:
7. Առաջին բուժօգնության ցուցաբերում՝ արտակարգ իրավիճակներում նախընտրելի գործողությունների կիրառում: